



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

ԱՌԱՅ

ՏԱՄՆ

ԿՈՒՍԱՆ ԱՅ

ՏԱՂԱՂԱՓՕՐԷՆ

ԳՐԵԱՅ

Յ. Ս. ՄԱԼԷՋԵԱՆ

Ի ԼՈՅՍ ԸՆԾԱՑԵԱԼ

ԱՇԻԱՏԱՍԻՐՈՒԹԵԱՄԲ

ՅԱՐՈՒԹԻՒՆ Թ. ԿԱՐԱԳԵՏԵԱՆԻ

ՅԳԱԳՐՈՒԹԻՒՆ Գ. ՃԵՋԱԼԵՆՈՂ

I  
603

0

398.9

2006/10

ԱՌԱՅ

ՏԱՄՆ

ԿՈՒՍԱՆԱՅ

ՏԱՂԱՉԱՓՈՐԷՆ



ԳՐԵԱՅ

Յ. Ս. ՄԱԼԷՋԵԱՆ



Ի ԼՈՅՍ ԸՆԾԱՅԵԱԼ

ԱՇԻՍ.ՏԱՍԻՐՈՒԹԵԱՄԲ

ՅԱՐՈՒԹԻՒՆ Թ. ԿԱՐԱԳԵՏԵԱՆԻ



Կ. ԴՊՅԻՆ


ՏՊԵԳՐՈՒԹԻՒՆ Գ. ՃԷՉՎԵՏԵԱՆ





Ա. Ռ. Ա. Ա

## ՏԱՍՆ ԿՈՒՍԱՆԱՑ



Երբ պայծառ Արփին մենէ հեռացեր  
Մեր հակոտնեայքը կը լուսաւորէր,  
Կէս գիշերուան մօտ երբ բոլոր աշխարհ  
Թանձր մութ պատած, երկիր էր խաւար.  
Ոչ երկնից աստեղք կը շողշողային  
Ոչ գիշերաւառ կը փայլէր լուսին.



1-603աե

Գիշերաչըջիկ պահապան մի ծեր  
 Ձեռքը բիր մը հաստ և աղօտ լապտեր  
 Կը տեսնէ յանկարծ հինգ կոյս աղջիկներ ,  
 Որ դրան մը տակ զարհուրած նստէր  
 Կուլան ու կողքան իրար պլլուած ,  
 Եւ ահ ու գողով լեզունին ցամքած  
 Որք թէպէտ անձամբ տխուր ցաւադին  
 Բայց չքնաղապեղ տեսեամբ փայլէին  
 Սեւորակ աչքեր աստեղք շողշողուն  
 Գողգոյս լոյս տային այն մութ տեղերուն  
 Շրթունք նռան հատք՝ վարդադոյն այտեր  
 Վարսքն ոսկեթել խոպոսք գանդրահեր :  
 Ծերուկն իւր դծուծ կանթեղին լուսով  
 Խեղճերուն դէմքը լաւ մի դիտելով ,  
 Կը տարակուսի կապչի զարմանքէն ,  
 Թէ փողոցն ինչ բան ունին այն ասեւն  
 Այնպիսի չքնաղ քնքուշ աղջիկներ  
 Եւ լռիկ կուլան՝ մութտեղը նստեր :  
 Արդ կարեկցարար և ՚ի պաշտօնէ  
 Այդ աղջիկներուն հարցումներ կրնէ ,  
 Չքնաղ օրիորդք սրտաբեկ կուսանք՝  
 Երկրածին էք դուք եթէ ուրուականք ,  
 Ձուարթածաղիկ դուք մէկ մէկ շուշան ,  
 Եւ վայելչադեղ փափկասուն կուսան ,  
 Ինչո՞ւ համար դուք այս գիշեր ատեն  
 Աւանց պաշտպանի և հինգդ մէկէն

Փողոց էք ինկեր այսպէս անտերունջ ,  
 Եւ տրտում նստած կուլաք լուռ ու մունջ  
 Գիշերուան ցողով մազերնիդ թրչած ,  
 Ծաւի աչքերնիդ արցունքով լեցուած  
 Երեսնիդ դժգոյն՝ գլուխնիդ ծռած ,  
 Գեղեցկութիւննիդ ծաղկանց պէս թուումս :  
 Բարէ՛ անման դուք գեղեցիկներ՝  
 Արդեօք ո՞վ զձեզ սաստիկ է նեղեր  
 Ո՞վ զձեզ այս տեղ հալածեց՝ ըսէք  
 Թշնամեաց ձեռքէն փախաք ահաբեկ  
 Կամ ամօթապարտ յանցաւոր էք դուք  
 Որ պահուրտեր էք հոս այսպէս ծածուկ :  
 Բայց ինչ որ ալ էք հոգ չէ , թող ըլլաք ,  
 Ձիս հօր տեղ դրէք , ինէ մի վախնաք ,  
 Եթէ անմեղ էք՝ կամ թէ մեղաւոր ,  
 Ձեր դաղտնիքն ինձի յայտնեցէք բոլոր ,  
 Թերեւս ձեզի կարենամ օգնել ,  
 Եւ ցաւակցութեամբ ձեզ մխիթարել  
 Ըսէք , աղջիկներս՝ մի վախնաք ըսէք ,  
 Իմ հարցումներուս պատասխան տուէք ,  
 Օրիորդք արտում սրտիւ թախծաղին  
 Այսպէս պատասխան կուտան ծերուկին :  
 Գուն մի ցաւակցիր մեր վրայ Հայրեկ  
 Տեսնելով զմեզ խեղճ ապերձանիկ  
 Եւ պարապ տեղը մեզ մի մեղքնար  
 Մեր թշուառութեան մենք եղանք պատճառ

Ոչ ոք հալածեց զմեզ կամ վանեց,  
 եւ ոչ թշնամի մարդ զմեզ նեղեց,  
 Այլ մեղադրելի մեր անհոգութեամբ  
 Պատուհասեցանք արդար իրաւամբ :  
 Համբարձող էինք մենք Տասն Կուսանք  
 Արքային հարսնիքին հրաւիրուեցանք  
 Սիրահար էինք փեսային տեսոյն  
 եւ կենդանի զո՛հ՝ անոր սուրբ սիրոյն  
 Մեր հինգ ընկերներն իմաստուն փրթան  
 եւ այն հարսանեաց արժանի եղան,  
 Ձի անոնք իրենց կուսագեղ մարմինն :  
 Հոգւոյ զարդերով ալ զարդարեցին,  
 Մաքրափայլ վարուց առատ ձէթ առին  
 Լապտերնին կանուխ պատրաստ պահեցին :  
 Իսկ մենք թանձրամիտ Յիմար անխմաստ՝  
 Փեսային գալըն անփոյթ անպատրաստ՝  
 Ձի զարդարեցանք հոգւոյ զարդերով՝  
 Այն սուրբ հարսանեաց պատշաճ հանդերձով :  
 Մարմնոյ զարդերով զմեզ պճնեցինք  
 Անմահ հոգիինս տգեղացուցինք,  
 Չալխարհ սիրեցինք՝ մարմին պաշտեցինք,  
 Հոգւոյ զարդերէ մերկիկ մնացինք  
 Գիշեր ու ցերեկ անմիտ խորհրդով  
 Կը փափաքէինք անյադ բաղձանքով  
 Հագուիլ շպարիլ եւ զուարճանալ  
 Տեսողաց աչքին հաճոյ երեւալ,

Աշխարհի փառքը սիրելնուս համար  
 Ճշմարիտ փառքէ զրկեցանք խաղառ  
 Առակաւ խօսիմք քեզ Հայր պատուական  
 Դու տեղեկանաս մեր թշուառութեան  
 Չունէինք վարուց սուրբ ձէթ հետերնիս  
 եւ կը խաւարէր պարապ լապտերնիս  
 Մէկ մ՛ալ յանկարծ ձայն հնչեց հզօր  
 Թէ « Ահա կուգայ Փեսայն ահաւոր » :  
 Յայնժամ վարանեալ հինգ Յիմար ընկեր՝  
 վաղեցինք կաղմել մեզ վարուց լապտեր,  
 Բայց ատենն էր ուշ՝ ընդունայն է ջանք,  
 Հարսնիք մտնելու արժանի չեղանք,  
 Ձի մեր հինգ ընկերք վառ լապտերներով  
 Գիմաւորեր են փեսան հանդէսով,  
 Ետքը փեսային հետ ներս են մտեր,  
 եւ անմիջապէս դռներն են դոցուեր :  
 Ատենն էր անցեր եկանք հեյլալով՝  
 Յուսահատեցանք հոգւով եւ մարմնով,  
 Ձի ողորմութեան էր դուռն դոցուած,  
 եւ մեզ մտնելու յոյս չէր մնացած  
 Շատ աղաչեցինք աղաղակեցինք  
 Փեսային գութը շարժել ջանացինք  
 եւ աղերսեցինք ողորմակ ձայնով  
 « Բաց մեզի ո՛վ Տէր՝ » գոչեցինք լալով,  
 « Բաց Տէր՝ պոռայէն » շունչերնին հատաւ  
 Բայց պաղատանքնիս լսելի չեղաւ :

)( 84 )( JAN 2013

վերջապէս փետան որոտաց ներսէն  
Ձեզ չեմ ճանաչեր՝ բաց կացէք յինէն :  
Շանթահար եղանք այն ահեղ ձայնէն ,  
կայծակ մեզ հասաւ փետային բերնէն ,  
Աւ մեզ յոյս չիկայ հարսնիք մտնելու  
Անմահ փետային փառքը տեսնելու :  
Երանի՛ ձեզի իմաստուն քոյրեր  
Խրախճանին երկնից երջանիկ հարսներ՝  
Հազար վայ աւաղ մեր Յիմար անձին  
Ձի մեզի մնաց դիւաց հետ բաժին :  
Ա՛լ դնա մենէ ծերուկ պատուական՝  
Ձի չեմք արժանի քոյր կարեկցութեան ,  
Ահա պատմեցինք մեր ցաւոց վէպը ,  
Ա՛լ դուն հասկըցիր այս քիչէն շատը ,  
Թէ որդիք ունիս , և թէ աղջիկներ ,  
Այս անցքը անոնց պատմէ՝ մի լուեր ,  
Փետային գալուն պատրաստին կանխաւ ,  
Ձի անօգուտ է վերջին ապաշաւ :

ՀՀ Ազգային գրադարան



NL0014290

1  
603



ԳԻՆ ԿՕ ՎԸ

62499.